ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2020թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

<<ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ>>
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐՈՂ
ՀԱՅԱՐՓԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բաղդասարյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի մարտի 11-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 1954) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է մարզպետարանի աշխատակիցների անձնական տվյալներին, որոնք չենք կարող տրամադրել: Աշխատակազմում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատողների համաձայնությունը՝ իրենց անձնական տվյալները փոխանցելու համար: <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95